Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Առինջի Կ. Ծառուկյանի անվան միջնակարգ դպրոց

Թեմա՝ Ուսուցման ավանդական և փոխներգործուն մեթոդների կիրառումը հասարակագիտություն առարկայի շրջանակում

Վերապատրաստող, մենթոր՝ Անուշ Ասատրյան
Ուսուցիչ՝ Սուսան Հակոբյան

Երևան 2023

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

<<Աշխարհը բարելավելու համար հարկավոր է
շրջվել դեպի դրական կրթական մեթոդներ: Այն պահից
երբ բացահայտվեն առավել արդյունավետ մեթոդները,
կրթությունը կդառնա գրեթե միակ համապատասխան
բնագավառը, որը կարող է բարելավել կյանքը:>>
Բ.Ֆ.ՍՔԻՆԵՐ

Դպրության 1600-ամյա պատմություն ունեցող Հայաստանում կրթությանը միշտ առանձնահատուկ նշանակություն է տրվել; Իր սկզբնավորման ժամանակներից հայ դպրոցը եղել է ժողովրդի քաղաքական ու ազգային գոյատևման պատվարը և առաջընթացի գրավականը; Հայաստանում կրթությունը ավանդաբար բարձր վարկանիշ է ունեցել; Այսօր էլ պետական ու ազգային խնդիր է համարվում կրթության համակարգի ապահովումը, միջազգային ասպարեզում նրա մրցունակության ապահովումը, դասավանդման նոր մեթոդների կիրառումը Դասավանդման ընթացքում մեթոդների հնարների կիրառումը նպաստում է սովորողների մոտ դասի յուրացմանը, նյութի կամ թեմայի ավելի մատչելի հասկանալուն ու ամրապնդում է գիտելիքները:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Ուսուցման մեթոդներ

Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և նոր ժամանակակից մեթոդներ: Ավանդական են համարում բացատրական զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից

դրա պարզ վերարտադրումը: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ:
Այսպիսով ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու, համադրելու հմտությունը: Ուսուցչի մեթոդական ձեռնհասությունը, ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող ,կարևոր ուղիներից մեկն է:

Հասարակագիտության դասին ուսուցման ակտիվ մեթոդների ձևը կախված է օրվա տվյալ դասի թեմայից, նպատակից և բնույթից: Ներկայումս հասարակագիտություն առարկայի դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու միտումը հրամայական է և գոյություն ունեն բազմաթիվ մոտեցումներ: Նախկին արմատացած ավանդական մեթոդներին, օրվա հրամայականով, փոխարինելու են գալիս փոխներգործուն(ինտերակտիվ), որի նպատակը միաբևեռ դասավանդում բազմաբևեռ դարձնելն է: Սա հասարակ տեխնիկական գորընթաց չէ, որը հեշտությամբ հնարավոր լինի ներդնել ուսումնառության մեջ:

Հարափոփոխ աշխարհում տեղեկատվական աղբյուրները և հնարավորություններն այնքան շատ են ու բազմազան, որ ուսուցիչը, միակենտրոն կարգավիճակից մղվում է երկրորդ պլան, ապացուցելով, որ սովորողը կարող է գիտելիք և հմտություն ստանալ այլ աղբյուրներից: Այս դեպքում ուսուցչին և սովորողին օգնության են հասնում փոխներգործուն, սովորողակենտրոն մոտեցումները, որոնք նորություն են և հանդիսանում են դասավանդման նորագույն գործիքներ:

Հասարակագիտությունը դասավանդող ուսուցիչները, այսօր իրապես զինված են բազմաթիվ ու բազմապիսի մեթոդ-հնարներով, քանզի պետական կրթական կառույցների համապատասխան օղակներ մեծաթիվ հասարակական կազմակերպություններ, արտասահմանյան մասնագետներ վերապատրաստում են հասարակագիտության բնագավառի մասնագետներին, քանի որ այն թեմաները,

որոնք ուսումնասիրվում են այս առարկայի շրջանակներում՝ քաղաքացիական կրթություն, մարդու իրավունքներ, տնտեսագիտություն, գեղագիտություն և այլն, առավել հարմար են նորագույն մեթոդներով դասավանդելու համար, դաշտը պարարտ և տրամադրող է:

Դասավանդման մեթոդները պայմանականորեն կարելի է բաժանել ուսուցչակենտրոն և սովորողակենտրոն եղանակների: Դրանց ընտրությունը մեծապես կախված է դասավանդողնի նախասիրություններից, դասարանի ժողովրդագրական նկարագրից, ուսումնական հաստատության որդեգրած քաղաքականությունից:

Ուսուցման մեթոդները ուսուցչի և սովորողի աշխատանքի այն ձևերն են, որոնք հնարավորություն են ընձեռնում խթանել գիտելիքների ձեռքբերումը, իմաստավորել դրանք, զարգացնել սովորողի մոտ կարողություն, հմտություն, ձևավորել սովորողների դիրքորոշումը, արժեքային համակարգը:

Ուսուցչականետրոն մոտեցում: Այս մոտեցումը հենվում է պաշտոնական ընդունված հեղինակության փորձագետի անձնական օրինակի վրա, ուսումնառության այս տեսակի դեպքում ուսուցիչը գլխավոր հեղինակությունն է, սովորողի դերը դասավանդողի մատուցած գիտելիքը և տեղեկույթը յուրացնելն է, հարցարանի միջոցով դրանք գնահատման ներկայացնելը:

Սովորողակենտրոն մոտեցում: Այս մոտեցումը ենթադրում է համագործակցային և հետազոտության վրա հիմնված ուսումնառություն: Սովորողակենտրոն մոտեցման դեպքում չնայած ուսուցիչը հեղինակություն է դասարանում, այնուամենայնիվ, ուսման գործընթացում հիմնական դերակատարությունը վերապահված է սովորողներին: Ուսուցչի գործառույթը սովորողներին ուղղորդելն ու օգնելն է նյութը յուրացնելու գործում: Սովորողների գիտելիքները կարող են գնահատվել պաշտոնական և ոչ պաշտոնական սանդղակների միջոցով:

Այս երկու մոտեցումների դեպքում կատարվում են՝

1. **Ուղղակի հրահանգավորում**
2. **Հետազոտման վրա հիմնված ուսուցում**
3. **Համագործակցային մոտեցում**

Այսօր ուսուցման մեթոդները պայմանականորեն բաժանվում են երկու խմբի՝ ավանդական և փոխներգործուն (ինտերակտիվ): Ավանդական են բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած են պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Փոխներգործուն մեթոդների հիմքում սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունն է, ինչպես նաև գիտելիքի ձեռքբերման ընթացքին նրա անմիջական ու գործուն մասնակցությունը: Այս մեթոդների առանձնահատկությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ սովորողը գիտելիք է ձեռք բերում՝ ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի, ընդգրկվելով թե՛ անհատական, թե՛ խմբային աշխատանքներում: Այդ կերպ նա յուրացնում է համագործակցային, սոցիալական փոխազդեցության և հաղորդակցական, ինչպես նաև ձեռք բերած գիտելիքը կիրառելու կարողություններ: Բացի դրանից՝ փոխներգործուն մեթոդներով ուսուցումը ենթադրում է գիտելիքների ու մտքերի փոխանակում, որը նպատակաուղղված է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը՝ այն հնարավորինս ակտիվացնելով, ստեղծելով այնպիսի միջավայր, որում սովորողը դառնում է իր ուսուցումը

կազմակերպող անձ՝ գործընթացի սուբյեկտ՝ ինքնուրույնության բարձր աստիճանով: Ուսուցման փոխներգործուն մեթոդները նպաստում են նաև միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, քննադատական մտածողության զարգացմանը:

Ինտերակտիվ մեթոդների բովանդակությունը

Հասարակագիտության դասավանդման ժամանակ փոխներգործուն մեթոդների և հնարների կիրառումը հրաշալի արդյունք կարող է ապահովել, երբ խոսքը վերաբերում է սովորողների շրջանում ճանաչողական կամ ստեղծագործական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև սովորողների ու մանկավարժների միջև փոխազդեցությանը

Փոխներգործուն մեթոդների կիրառման կանոններն են.

ա. սովորողներից ոչ մեկը չի կաշկանդվում՝ մտածելով, որ ինքը կարող է սխալվել,

բ. դիմացինի կարծիքը չի մերժվում ոչ մեկի կողմից,

գ. ցանկացած կարծիք կամ գաղափար խրախուսվում է:

Փոխներգործուն մեթոդներն արդյունավետ են հատկապես խմբային աշխատանքների կամ համագործակցային ուսուցման ժամանակ: Խմբի բոլոր անդամները պատասխանատու են դառնում նյութը յուրացնելու համար: Խմբային աշխատանքի մի մասը կարելի է առանձնացնել և կատարել անհատապես, սակայն մեծ մասը պահանջում է փոխգործուն աշխատանք, ընդ որում՝ խմբի անդամները մշտապես արձագանքում են միմյանց կատարած աշխատանքին, հարցեր են տալիս, քննարկում են կատարած եզրահանգումները և այլն: Փոխներգործուն մեթոդներով ուսուցման ժամանակ սովորողները դրսևորում են բարձրակարգ մտածողություն, նյութի ավելի խորքային ընկալում, ավելի լուրջ վերաբերմունք ուսումնառության գործընթացին:

Փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդ

Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները,այլ հնարավորություն է տրվում սովորողներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը, ինչպես նաև պրակտիկ գործունեության ընթացքում ձեռքբերել նորանոր գիտելիքներ և հմտություններ: Ուսուցման ճանաչողական գործընթացը ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, այս մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռք բերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում և այդ պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն փոխներգործուն մեթոդներով: Դրանց հետ զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են պատմելը, բացատրելը: Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել աշակերի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը , հաղորդակցական կարողությունը: Այս մեթոդը հնարավորություն է տալիս փոխել նաև ավանդական սեղանների դիրքը: Սեղանները զույգ-զույգ միացնելով ստանում ենք կլոր սեղանների տպավորություն և սովորողները կարողանում են կատարել խմբային աշխատանքներ, մեկը մյուսին օգնելով, այստեղ բացառվում է որևէ մեկի առաջնությունը: Տեղի է ունենում գիտելիքների ու մտքերի փոխանակում իրար մեջ, որը կատրվում է բարիացակամորեն: Դա նպաստում է ոչ միայն նոր գիտելիքներ ստանալուն, այլև զարգացնում է իմացական գործընթացը, այն բերելով ավելի բարձր մակարդակի՝ համագործակցային ձևի: Փոխներգործուն մեթոդը դառնում է արդյունավետ, երբ ցանկացած սովորող զգում է իր մասնակցության և անձի կարևորության դերը: Ինտերակտիվ ուսուցման էությունն ան է, որ բոլոր սովորողները ընդգրկվում են ուսումնառության մեջ:

ՈՒսուցման ամեն մի մեթոդ ունի իր նպատակն ու բովանդակությունը և իրականացման միջոցները: Մեթոդները բաժանվում են բանավոր և գրավոր խմբի: ՈՒսուցման մեթոդները բազմազան են՝ կախված դասավանդվող առարկայից, դասի նպատակից ու բնույթից: Լ. Վիգոտսկին գրել է<<Մեթոդը միաժամանակ նախադրյալ է և նյութ, գործիք և ուսումնասիրության արդյունք:>> Ուսուցման ամենատարածված ձևերն ու ակտիվ մեթոդներն են հասարակագիտության դասին՝

1. Պատմել
2.Բացատրություն-վերլուծություն
3.Թեստային աշխատանք
4.Աշխատանք սկզբնաղբյուրի հետ
5.Զրույց-Բանավեճ-Հիմնավորում
6.Համակարգիչով դասի անցկացում/պրեզենտացիա/ և նյութերի ցուցադրում
7.Դասի մոդելավորում կամ սխեմայի կազմում/ քարտեզագրում/
8.Գրավոր աշխատանք-համառոտագրում
9.Գործնական աշխատանքներ
10.Ինքնուրույն աշխատանքներ
11.Վարժություններ՝ աղյուսակներ, Վենի դիագրամմա, Տ-աձև աղյուսակ, քառաբաժանման մեթոդ, ԳՈՒՍ, <<Կերպարային քարտ>> ռազմավարություն, <<Գաղափարների քարտեզագրում>> ռազմավարություն և այլն
12.Խմբային մեթոդ
13.Ցուցադրում-իլյուստրատիվ մեթոդ
14.Դերային մեթոդ
15.Դասի կրկնություն

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ մեթոդը կարող է դառնալ գործնական աշխատանքի, ինքնուրույն աշխատանքի նյութ և նպաստել վերլուծական մտածողությանզարգացմանը: Սկզբնաղբյուրները կարող են ծառայել որպես դասագիրքը լրացնող միջոցներ, ձևավորել ինքնուրույն հետազոտական աշխատանք կատարելու հմտություն:

Քառաբաժան մեթոդ

«Քառաբաժան մեթոդը» չափազանց հարմար է շարադրանքի հետ աշխատելիս:Ուսումնական նյութն ընթերցելուց հետո սովորողներն առաջին վանդակում, որը կրում է «Ինչ էիք տեսնում տեքստը կարդալիս» զետեղում են այն մտքերը, որոնք կբխեն հարցադրումից:

Երկրորդ վանդակում սովորողներն արտահայտում են այն հույզերը, որոնք պահանջում են «ինչ էիք զգում տեքստը կարդալիս»:

Երրորդ վանդակում սովորողները զետեղում են այն մտքերը, որոնց միջոցով նրանք կկարողանան իրական կյանքի և օբեկտիվ իրականության հետ կապել պատմական իրադարձությունները,փաստերն ու երևույթները՝ «Պատմական իրադարձությունների կապը կյանքի և օբեկտիվ իրականության հետ»:

Չորրորդ վանդակում սովորողները ձևակերպում են նոր վերնագիր կամ հորինում են այն,խմբագրում դասի վերնագիրը «Դասի նոր վերնագիրը»:

Ինչ էիք տեսնում տեքստը կարդալիս:	Ինչ էիք զգում տեքստը կարդալիս:
Կապը իրական կյանքի հետ:	Նոր վերնագիր և պատկերանշան

ԳՈՒՍ մեթոդ

Կշռադատման փուլում կիրառվող՝ հաճախ օգտագործվող մեթոդ-վարժություններից է ԳՈՒՍ-ը: Այս մեթոդը երեք սյունակներից բաղկացած աղյուսակ է, որը կարող է դառնալ սովորողների ուղեցույցը:Այն կառուցողական ուսուցման մեթոդի մաս է կազմում, նրա կիրառման ժամանակ սովորողները բավական հեռանում են ավանդական մեթոդներից: ԳՈՒՍ աղյուսակը մշակվել է որպես ուսումնական ընթերցանության ռազմավարության ձև: Աղյուսակը կարելի է գծել գրատախտակին կամ մեծ թղթի վրա, որ տեսանելի լինի հարցադրումները և գրելու համար հարմար:

Գ	ՈՒ	Ս

<<Կերպարային քարտ>> ռազմավարություն

Դասավանդման այս ռազմավարությունը հնարավորություն է ստեղծում խթանել սովորողների վերլուծական-քննադատական մտածողության զարգացմանը, ձևավորել թեմատիկ կերպարների միջև համեմատական զուգահեռներ անցկացնելու հմտություն, ինչպես նաև քննել և դիտարկել կերպարը կարևորագույն կամ բեկումնային դեպքերից առաջ և հետո ընկած ժամանակատարածային կտրվածքով: Սովորողը արտահայտում է երկու ինքնուրույն դատողություններ հարցի շուրջ, կերպարի հանդեպ ձևավորում է անհատական վերաբերմունք:



«Գաղափարների քարտեզագրում» ռազմավարությունը

Սա մտքերի և դրանց փոխհարաբերությունների տարածական պատկերումն է: Օգնում է գիտակցված ձևով սովորել, ընդունել նոր տեղեկատվությունը և տեսողական պատկերի միջոցով ներկայացնել, թե ինչպես են տվյալ ոլորտի գաղափարները փոխկապակցվում:

Հասկացությունների քարտեզ կազմելու համար անհրաժեշտ է գլխավոր, առանցքային, հիմնական միտքը նշել թղթի մեջտեղում՝ ուղղանկյան ձևով: Այնուհետև կապակցված գաղափարները պետք է գրել կենտրոնական մտքից ճառագայթող ճյուղերին: Բոլոր բառերը, արտահայտությունները գծերով միացնել կենտրոնին կամ ճյուղերին՝ ըստ դրանց՝ միմյանցից կախված լինելու հանգամանքի: Մտքերի քարտեզագրումը կարելի է համարել մտքերի տարափի մի տարատեսակ:



S-աձև աղյուսակ

Հասարակագիտության դասավանդման գործընթացում Т-աձև աղյուսակը կիրառվում է միևնույն հասկացության, փաստի, երևույթի, իրադարձության երկու հակադիր կողմերը համեմատելու կամ հակադրելու, ազդեցության հետևանքները ընդգծելու նպատակով: Իր ձևով տառը հիշեցնող աղյուսակը կազմված է երկու սյունակից,որտեղ գրանցվում են խնդրի դրական և բացասական կողմերը:Այս ձևաչափով իրականացվող քննարկումների ընթացքում սովորողներից ակնկալվում են տարբեր մոտեցումներ, դիրքորոշումներ, խնդրի վերլուծման տարբեր տեսանկյուններև այլն: Այն առավել շատ տրամադրվում է սովորողին ինքնուրույն աշխատանքի ժամանակ:

Դրական կողմեր	Բացասական կողմեր

Խմբային մեթոդ

Վերջինիս շնորհիվ զարգանում են սովորողների հաղորդակցման հմտությունները, փոխօգնության և երկխոսության կարողությունները, միասին պատասխանատվություն ստանձնելու ունակությունը: Շատ կարևոր է, որ այս բազմազանությունը, մեթոդական հագեցվածությամբ, սովորողները դասերին անընդհատ «հայտնագործություններ» անեն, կարողանան իրենց մտքերը ձևակերպեն ինքնուրույն ու կապակցեն դասարանում ուսումնասիրվածն իրենց շրջապատող իրական կյանքի, միջազգային, տարածաշրջանային հարաբերությունների հետ:

Դերային մեթոդ

Այս մեթոդը դերային խաղերի, նմանակումների, մոդելավորումների ժամանակ սովորողներին հնարավորություն է տալիս «հայտնվել» այս կամ այն իրավիճակում և զգալ տարբեր արժեքների ու մոտեցումների կարևորությունը հասարակական կյանքում, պատմական անցյալի իրադարձությունների նկատմամբ:

Ինտերակտիվ ուսուցման սկզբունքներն են.

1.Փոխներգործություն,փոխուսուցում

2.Սովորողի ակտիվություն

3.Համագործակցություն

4.Ինքնաարտահայտման խրախուսում

5.Հետադարձ կապի ապահովում և այլն:

Փոխներգործուն մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և սովորողների միջև, այնպես էլ իրենց՝ սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում է հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է սովորողների խոսքը: Այս մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները:

Փոխներգործուն /ինտերակտիվ/ մեթոդի առանձնահատկություններն են.

- սովորողը նյութը սովորում է ինչ-որ բան կատարելով, մասնակցելով որոշակի գործընթացի
- սովորողը հենվում է ոչ այնքան իր հիշողությանը, այլ ինքնուրույն, ստողծագործական, քննադատական մտածողությանը
- սովորողիի համար հնարավորություն է ստեղծվում ինչպես անհատական,այնպես էլ խմբային աշխատանքի համար
- սովորողը ձեռք է բերում համագործակցային կարողություններ, սոցալական փոխազդեցության,հաղորդակցական կարողություններ
- նյութը յուրացման ընթացքում սովորողը հնարավորություն է ստանում ի մի բերել, ամփոփել,ակտիվացնել և կիրառել սովորածը
- ստեղծվում է ինքնակրթության միջավայր:

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի խթանման փուլում.

- Մտագրոհ
- Խմբավորում
- Պրիզմա
- Մտածիր, զույգ կազմիր, քննարկիր
- Գուս /գիտեմ,ուզում եմ սովորել, սովորել եմ/
- Դերայի խաղ

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի իմաստի ընկալման փուլում

- T-աձեվ աղյուսակ
- Գաղափարների /հասկացությունների/ քարտեզագրում
- Վենի դիագրամ
- Փոխներգործուն նշանների համակարգ
- Բանավեճ
- Ձրույց
- Խորանարդում
- Խճանկար
- Շրջագայություն պատկերասրահում
- Երեք բանալի և մեկ կողպեք
- Կարուսել

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել դասի կշռադատման փուլում.

- Քառաբաժան

- Ձնագնդի
- Գնահատման անիվ
- Իրավիճակների վերլուծության մեթոդ
- Ուղեղային (մտային) գրոհ կամ մտքերի տարափ (բրեյնստորմինգ)

Ուսուցման մեթոդներ փոխներգործուն գործընթաց ուսուցչի և սովորողի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում ու յուրացում՝ նախատեսված ուսումնառության բովանդակությամբ: Ուսուցանվող նյութի ընկալում (ուսուցողական ընկալում). կարճաժամկետ փոխազդեցություն դասավանդողի և սովորողի միջև՝ ուղղված կոնկրետ գիտելիքի[1], հմտության և կարողության փոխանցմանն ու յուրացմանը:

Ավանդույթի համաձայն՝ մանկավարժության ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի.

1. Բանավոր, տեսողական, գործնական (ըստ ուսումնական նյութի աղբյուրի)
2. Վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն (ըստ կրթական-ճանաչողական գործունեության բնույթի)
3. Ինդուկտիվ և դեդուկտիվ (ըստ ուսումնական նյութի ներկայացման և ընկալման տրամաբանության)

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ՝ դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն: Այս բաժանումները հետագա հստակեցման կարիք ունեն, քանի որ ուսուցման գործընթացը չի կարող լինել պասսիվ, ու նաև միշտ չէ, որ այն սովորողների համար իրենից հայտնագործություն է ներկայացնում:

Պասսիվ մեթոդ, սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասսիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասսիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների, թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասսիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, սակայն, չնայած դրան, այն ունի մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասսիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը:

Ակտիվ մեթոդ, սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասսիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասսիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Եթե պասսիվ ուսուցմանը բնորոշ է ավտորիտար ոճը, ապա ակտիվ մեթոդների դեպքում նախապատվությունը տրվում է դեմոկրատական (ժողովրդավարական) ոճին: Շատերը հավասարության նշան են դնում ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ: Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր:

Ինտերակտիվ (փոխներգործուն) մեթոդ ինտերակտիվ նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ: Այլ կերպ ասած՝ եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը: Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

Դասավանդողը մշակում է նաև դասի պլանը (սովորաբար այն կազմվում է ինտերակտիվ վարժություններից և առաջադրանքներից, որոնց կատարման ընթացքում սովորողը սովորում է նյութը):

Հետևաբար, ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից: Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը:

Հասարակագիտության ուսուցչի աշխատանքը պետք է լինի սովորողի ուշադրությունն ակտիվացնելու, որպեսզի սովորողը կարողանա ընկալել այն ամենն ինչ անհրաժեշտ է իրեն:

Եթե դասը չի արժանանում սովորողի ուշադրությանը, ապա այն գործնական դաս չի լինելու: Ցավոք սրտի, սոցիալական ցանցերի մշտական շեղումների և հեշտությամբ հասանելի տեսախաղերի վրա մեծացած սերնդի սովորողների ուշադրությունը միշտ պայքար է:

Տեխնոլոգիայի պատճառով առաջացած խնդիրները,ուսուցիչը կարող է լուծել հենց տեխնոլոգիայով. Օրվա լրահոսի ակտիվությունն օգտագործելով ուսուցիչը

տեխնոլոգիա օգտագործելով դասի ընթացքում ապահովում է պլանավորված նյութի մատուցումը:

Ինտերակտիվ մեթոդների օգտագործումը հասարակագիտության ժամին հետազոտվել են և ցույց են տալիս երբ սովորողը լավ է զգում իրեն դասապրոցեսում, ուրախ է և հանգիստ, հաճույք է ստանում սովորելիս, քանի որ ակտիվանում են ուղեղի հիշողության կենտրոնները:

Ինտերակտիվ մեթոդները տարբեր են տարբեր դասարանների համար: Ուսուցիչը պետք է հաշվի առնի տարիքը, կարողությունը և անհատական հատկությունները:

Գրականություն

1. Գ.Ե.Ղույումչյան, «Մանկավարժություն»
2. Գայանե Վարդանյան, <<Հին ու նոր մեթոդների դասավանդումը արդի փուլում>>
3. https://ahaslides.com/hy/blog/15-innovative-teaching-methods/?fbclid=IwAR1d5aYZShynNHG7o5nIg3Lw5IIVOv4Zzqq80uR3pvCien8y85PTovweR8U
4. https://www.educatorstechnology.com/